

զգրելն իմ կաթողիկոսն էջմիածնի ի նամակ ըստ նորա խնդրոյ՝ դժբացեալ ծալէր եւ պահէր զթուղթն, եւ փոխեալ այլոց դարձեալ գրէին կաթողիկոս Երուսաղէմի, վասն որոյ ասելի է թէ Մի՛ մոռանայք զձայն ձերոց պաշտօնէի: Որ քեւ կամակցէի գիտացեալ մեր յԱստուածուստ զՋատագովութիւնդ՝ կամակցէի ի Պըրուսա եւ ի բերելն յարքայարանս. եւ մինչ ի Ղաւախ ձգէր զաչքն ի յետ օգնել ոք ի դարձուցանել եւ ձգէր զոտսն ի կախ եւ ձգէր ապա զյոյսն ի կարին եւ յայդր եւս՝ մինչեւ եմուտ ի ներքս: Արդ ոչ ոք քեզ նմանեցաւ, թէպէտ շրթամբք միաբանէին եւ ոչ սրտիւք. զի ոմանք զՄովսիսին փոքրահոգութեան սակի եւ ոմանք զՍահակին երկարնակութեան, որ ցուցեր ըզթուղթն վասն նորա գրեալ, ոմանք զԴաւթին ձեռնբէցութեան ցոփութիւն պատճառեալ, եւ այլք ըզՋատագովութեանդ սկզբնաւորութիւնդ, որ այդուստ յուրաստ լինէին, զի մի յաջողեսցին պատիւն եւ աւնունն այն քեզ: Այլ կամեցան դորա կամայ յակամայ. ամենայն ոք զիւրն հնձելոց է՝ զոր ցանէ. եւ զուրստ աշխատանացդ ընդունելոց ես զանապական պարզեւսն: Եւ դա զոր խնդրէրն՝ էառ զկարգ եւ զանուն եւ զտեղի. արդ ընդէ՞ր յիշէ զՍմանցոց երկիր, զոր զայնքան փառսն մեք մեզէն քաջութեամբ ստացաք, ասէր. եւ նախատէ զքաղաքացիս թէ Չկարացին զիս արգիլել. ընդէ՞ր յոգւոց հանէ. միթէ՞ վասն այլ եւս ոչ կարելոյ ապուելոյ եւ գաղելոյ. ընդէ՞ր լայ, միթէ՞ զըզձալիսն զմտաւ ածեալ տագնապի: Արդ տեղն է վանիցն եւ տնօրինողին Աստուծոյ կամքն յայդմ վայրի վարեալ էած: Լաւ զգուշութեամբ այսուհետեւ հոգ տարջիք դմա ի պահպանութիւն մինչեւ ցմահ, զի կարծիք ունիմ՝ նկրտիլ ձգտիլ յայսմ կողմ փախըստեան: Յանկալի եղեւ ինձ գրել նոր երգօք գանձս Յակոբ կաթողիկոսի, զի երթիցէ յօրհնութիւն զե-